

« Չարանենց պարսկունիին պատժելը » և կամ շարութեան իրեն հատուցումը գտնելն՝ այդ այնչափ բնական էր, որ անհրաժեշտ կը պահանջուէր որ այնպէս լինէր. բայց « գիտ Գանիելի » ձեռքով լինելն՝ այդ բոլորովին պատահական բան մ'էր : Առ այժմ՝ այսչափ բաւական կը համարիմ, խոստանալով ուրիշ թերթի աւելի խոր կերպով և աւելի մօտէն շօյափել տոյն խնդիրը, առիթ ունենալով գրել այժմեան վէպերու մասին : — Ընդհանրապէս

լրագրական ասպարիզին վրայ յաճախ երևցողաց միակ թերութիւնն է թերևս, շատ ժամանակ չունենալով հասուն կերպով խորհրդածելու, գրել « *currente calamo* », ինչպէս կ'ըսեն լատինք. հետեւաբար պէտք չէ զարմանալ, մանաւանդ թէ ներելի է, եթէ մերթ ընդ մերթ անոնց գրութեանց մէջ « *lapsus mentis* » պատահելու լինին :

Հ. Յ. Թ.

ՄԵՂՈՒԱԲՈՒԾՈՒԹԵԱՆ

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ



ՆԱԿԱՆ պատմութեան մէջ չըկայ առաւել զարմանալի և հետաքրքրական քան զքննութիւն բարուց և գործոց մեղուաց : Որպիսի աշխուժութիւն, ճարտարութիւն, կարգաւորութիւն, աշխատասիրութիւն, և ներդաշնակութիւն կը տեսնուի այս քաղաքումք միջատաց մէջ : Որք կը ժողվեն ի ծաղկանց անուշահամ և պիտանի նիւթերը, և կը ջնջին իրենց ընկերութենէն զանոնք որ անպիտան են և ապտամբ, կերող և ոչ աշխատող :

Սոդոմոն իմաստուն ծուկերուն օրինակ կը բերէ միջիւնը, ըսելով « Երբ մատ առ մրջյունն » . վասն զի ամբարն մէջ հազարաւորք ի միասին կ'աշխատին անդադար՝ համբարել իրենց պաշարը ձմեռան համար : Բայց ես լաւագոյն օրինակ կը համարիմ մեղուն . վասն զի միջիւնը միայն իր անձին օգտակար է և ֆառակար մարդոյ, անոր համար կը ջանամք հալածել մեր համբարանոցներէն . ոչ այսպէս է մեղուն, թէ անձին և թէ մարդոյ օգտակար, և իր անխոնջ աշխատասիրութեամբ մեղ օրինակ :

Հին ժամանակաց հետէ փլիխոփայք և ազարակագէտք պարապեալ են մեղուաց վրայ : Բայց անոնցմէ շատերը, ինչպէս նաև Սրիստոտէ և Վիրգիլիոս, անգէտք էին մեղուաց ներքին կազմածոյն և ծննդեան կերպին . և իրենց՝ գրուածոց մէջ կը նկատի եշմարտութեանց հետ նաև շատ վրիպակներ :

Պահեալ էր այս գիտութեանս յառաջագիմութիւնը Սլամմերդամի (Swammerdam) հոլանտացոյ, Մերալտոյ, Ռեոմբարի, Փրանկիսկոս Հոբեր (F. Huber), հելուետացոյ, և Կոլին (Collin) քահանային : Հոբերի մեղուաց վրայ լրաց գիտողութիւնները շատ նշանաւորք են . և իր գիտածները թարգմանուած են եւրոպական գլխաւոր ազգերէ : Իր գիտողութեանց գլխաւորներէն զոմանս յիշատակեմք : Առաջինն է, բեղնաւորութիւն մայր մեղուի յօգս : Դրաւ (Draw) կը կարծէր թէ որք մեղուններն ձկնեալ պէս կը բեղնաւորեն իգին ձուերը, ոռոգելով գնոստ

իրենց ծննդական հեղուակ։ Մուսմեբզամ կը կարծէր թէ արուին գոլորշին բաւական էր բեղնաւորել ձուերը։ Նախթորֆ և Գոնթարտի խառնուրդն կը կարծէին թէ էգն ինքնին կը բեղնաւորէր իր ձուերը։ Սէփիւր կ'ըսէր թէ կը բեղնաւորին փեթակի մէջ, բայց կ'անգիտանայր կերպը։ Պահալ էր Հուբերի գտնել զճշմարիտ եղանակ բեղնաւորելոյ մեղուաց։

Յիշատակեմք ևս Հուբերի ուրիշ գիտներն. որք են, սահմանելն գործաւոր մեղուաց սեւը, մայր մեղուաց իրարու զէմ ունեցած հակառակութիւնները և պատերազմը, մեղուաց ճարտարապետութիւնը, և մոմին սկիզբը. զի յառաջ քան զնա կը կարծուէր թէ մոմը ծաղկանց բեղուն նիւթէն կը հաւաքուէր։

Այս գլխաւոր գիտներուն պատնառաւ փրանկիսկոս Հուբեր արգրել իրաւամբ համարեցաւ գլխաւոր ի մեղուաբոյծս, որ երեսուն տարի պարապեցաւ մեղուաց բարբը բննելու, և մեռաւ ի լոգանա 1832 ին, իբր ութսուն և երեք տարեկան հասակի մէջ։ Ինքն կոյր էր աչօք, բայց մանրաքնին ի դիտողութիւնս, զոր կ'ընէր իր ծառային ձեռքով։

Ուշելով մեք ալ այսպիսի օգտակար գիտութիւն մը տարածել մեր ազգին մէջ, և հինաւանդ իրիպակ սովորութիւնները ջնջել մեղուաց պահպանութեան և մեղրը ժողովելու կերպին համար, ձեռք պարկեմք այս գործոյս հրատարակութեան, առաջնորդ մեզ առնելով Համեսի (Hamet) գրութիւնը, որ է քարտուղար մեղուաբուծական և միջատաբուժական ընկերութեան ի Գազդիա, և ուսուցիչ մեղուաբուծութեան 1856 էն ի վեր լուբսնորդքի պարտէղին մէջ. որոյ գրուածոյն վեցերորդ տպագրութիւնը եղած է 1889 ին։

Աչքէ անցուցինք նաև Ա. Լ. Քլէմանի նոր Մեղուաբուծութիւնը, որ հրատարակեցաւ 1893 ին։

ՄԵՂՈՒԱՅ ՀԱՄԱՔԱՅ ՆԻԹԵՐԸ



Մեղր. — Մեղուաց հաւաքած նիւթերն են Մեղր և ամեն շաքարային հեղուկ նիւթեր, Բեղուն և Ախմաւում։

Մեղրն է բաշխումն բուսոց զոր կ'ընեն իրենց փոքրիկ գեղձերով, որք երբեմն ցցուած կ'ըլլան և երբեմն ի խոր, և կոչին ի բուսաբանից Նեկտարին, և ելած անոյշ հիւթը՝ Նեկտար։ Այս բաշխումը կ'ըլլայ գրեթէ ամեն բուսոց ծաղիկներէն, առաւել կամ նուազ առատութեամբ, ըստ տաքութեան կամ թացութեան եղանակին. և ասկէ յայտնի կը տեսնուի. թէ րոյսը ամեն տարի հաւաքաբաւառ չեն բաշխեր այս մեղրածորան հիւթը։ Մեղրին հանգամանքը, համը, հոտը, ջոյնը փոփոխականք են ըստ բնութեան բուսոց և հողոյ, ինչպէս նաև կլիմային և օդոյ վիճակին։

Հաւաքումն մեղրի. — Մեղրն է գլխաւոր կերակուր մեղուաց. ուստի և կը ժողովն անյազարար որչափ և կրնան, և կը լեցնեն իրենց փեթակը։ Երբ եղանակն յարմար է, արեւ ծագելուն պէս, նաև անկէ առաջ կը թռչին մի ծաղիկ ի միւսն, և կը մտնեն իրենց պատիւր ծաղիկին պսակին մէջ ի խոր, անկէ անոյշ հեղուկը ծծելու համար, զոր կը զետեղեն իրենց առաջին ստամոքսին մէջ. և երբ լեցուի, կը տանին ի փեթակ, ուր կազմակերպեն, այս ինքն, ջերմութեամբ զուրչացնեն ջրոյ մեծագոյն մասը որ խառն է մեղրածորան հիւթոյն հետ։ Բայց կը պահէ իր սկզբնական հանգամանքը, ծաղիկն համը, և երբեմն նաև ջոյնը։ Չորեք կերպարանաւ փոխութիւն մը անցնելով մեղուին բերնէն, բայց երբեմն կրէ մասնըկական փոփոխութիւն մը, ինչպէս եղեգան շաքարը փոխելով ի շաքար խաղողոյ, կամ թէ բւել ի մեղր։

Համբարումն մեղրի. — Երբ մեղուներն կը բեռնաւորին ըստ բաւականին, կը գառնան իրենց բնակարանը, և կը թափեն իրենց ժողոված մեղրը այն դատարկ բլրին մէջ

որուն կը հանդիպին, և կը դառնան նորէն, նոր պաշար բերելու համար, և այսպէս մինչև երեկոյ: Իրենց ստամբար լեցնելու համար հարկաւոր եղած ժամանակը՝ կախումն ունի ծաղկանց շատութենէն, և նոյն ծաղկանց ունեցած մեղրին քանակէն: Եթէ մեղրաբեր բլլան ծաղիկներն և եղանակն յարմար, կրնայ մեղուն հինգ վայրկեանի մէջ կատարել իր պաշարը, մինչդեռ ուրիշ ծաղկանց վրայ և անյարմար եղանակի մէջ քառասպտակի ժամանակ կ'ուզէ, և դեռ պաշարը կատարեալ համարուի: Երկրանց մեղր բաշխելու յարմարագոյն ժամանակն է երբ օդը բլլայ հանգարտ, քիչ մը խոնավ և ելեկտացեալ: Յուրտ և չոր օդը, հանդերձ հիսխային հոգմով, հակառակ է ծաղկանց բաշխման: Պետք է իբր երկու վայրկեան որպէս գի մեղուն կարենայ թափել իր պաշարը փեթակին մէջ: Ըսենք թէ աշխատարար մեղուներն կը դնեն սովորաբար իրենց ծողված մեղրը առաջին դատարկ բլլին մէջ որուն հանդիպին. բայց ետքը կը փոխադրեն փեթակին վերին կողմ, և խորխոխն ծայրերը, օովորաբար սկսելով փեթակին դրան աւելի հեռունեղէն կամ թէ քան փեթակին խորէն: Երբոր մեղրը առատ բլլայ, բլիչներն կը լեցուին մինչև իրենց յատակը. և երբ բլիչ մը լեցուի, մեղուներն անօր վրայ ծածկարանով կը գոցեն: Այս ծածկարանն է տափարակ, սպիտակ, նուրբ և թափանցիկ մոմ որ կ'արգելու պարը վար թափելէն, և միանգամայն կը սկսէ մեղրին ամեն հանգամանքը: Իսկ այն բլիչներն ուր ծածկած են գլխով ծածկարանով, են ի բնակութիւն ձագուց, և կոչին Զագարան:

Մտորակ. — Զէ թէ միայն ծաղկանց բաժակին մէջ կը գտնուի մեղրը, այլ և խոտեղէն բուռոց ումանց ցօղնոյն մէջ, ինչպէս Վիգի, և շատ տեսակ ծառոց տերեղոց վրայ, ինչպէս են կանաչ կաղնի, բարտի, կուենի, պեկէ և այլն, որք բաշխեն առատապէս անոյշ հիւթ մը, և այդ է որ կոչի Մեղրոռ: Կան երկու տեսակ լուծիներ որոց կըրկալաբը է անոյշ հիւթ մը, զոր մեղուք կը հաւաքեն. և կազմեն անիւն, ինչպէս՝ նաև մեղրուկէ, հասարակ մեղր:

Մեղուներն պտղոց շատերուն հիւթը կը գարնեն ի մեղր, այս բանին համար մեղրաբոյններն տան մեղուաց զօշարակ պտղոց ի կերակուր, երբ պակսի մեղրը: Այս օշարակներն կը համարուին առաւել կամ նուազ ընտիր ըստ քանակի շաքարին զոր կը պարունակեն:

Մեղուներն կը փոխարկեն ի մեղր զարար եղեգան, ճակնդեղի, լազտի, գետնախինձորոյ և այլն, երբ հալած բլլայ, նոյնպէս զհիւթ շատ ծառոց և զմանանայ: Շաքարէ շինուած մեղրը չէ այնպիսի օշարակային, և չունի ի ծաղկանց հաւաքեալ մեղրին գեղեցիկ ճաշակը: Խոտի շաքարէ շինուած մեղրը կը պահէ իր նախկին ճաշակը:

Ինչ բանի կը գործածեն մեղուք զմեղր. — ինչպէս ըսինք վերը, մեղուք կը գործածեն զմեղր իբրև կերակուր իրենց անձանց և ձագուց. որ յետ անցնելոյ իրենց երկրորդ ստամոքսէն և կերպարանային բլլալոյ իրենց գործարանաց մէջ՝ կազմեն զմոմ, որոյ վրայ վերջը պիտի խօսիմք:

Բաղկացումն մեղրի. — Մեղրի տարրարանական բաղկացութիւնը բազմամասն է և փոփոխական. կը գտնուի մէջը շաքար բիրեքական կամ քաղցրանիւթ, նման շաքարի փեկուղի, և ուրիշ շաքար մը հեղուկ և անբիրեքական, փոքրիկ մասն շաքարոյ և զեգան լուծեալ, որ ինքնին կը դառնայ ի քաղցրանիւթ ազդեցութեամբ խմորոյ միոյ որ կը գտնուի մեղրին մէջ: Կը գտնուի ևս զազպէնիտ, որ է շաքարային նիւթ զազպէնի և խմորելի հիւթոց ոմանց, երկու գործարանական թթուտներ, ինկաւէտ նիւթեր, գունաւորիչ գեղին նիւթ, և ի վախճանի, պարարտ ու բարակածեալ նիւթեր, որք ըստ մասին յառաջ գան ի բեղնոյ, և ենթակալ են խմորման:

Մեղր կը բուլանդակէ յինքեան առաւել կամ նուազ շաքարային նիւթեր՝ ըստ ծաղկանց յորոց հաւաքի, ըստ կլիմայի և հանգամանաց օդոյ: Գաղղոյ մեղրը կը բուլանդակէ 80—88 առ հարիւր շաքարային նիւթեր:

Բեղուն եւ հաւաքումն նորա. — Բեղունն է առատ փոշի որ կը գտնուի ծաղկանց բազուած առջներուն մէջ: Այդ փոշին որ հա-

սարակորէն զեղին կ'ըլլայ, կը բաղկանայ ամբողջ մանր գնդակներէ՝ յորոց կազմի ծաղկին սերմը Բեղունը կ'ըլլայ ևս կարմիր, նարնջադոյն, սպիտակ, գորշ և սևաւ :

Ուստուծիւն կամ նուագուծիւն բեղնոյ է. համեմատ մեղրային նիւթոյ զոր ծաղիկներն բաշխեն իրենց նեկտարինէն: Եւ սակայն կան ևս ծաղիկներ որ տան շատ բեղուն և քիչ մեղր, և ոմանք՝ շատ մեղր և քիչ բեղուն: Բեղնոյ քանակն և որակն մեղրի պէս կախումն ունի բուսոց տեսակէն, երկուն, Պղէն և ժամանակէն:

Մեղուններն կը հաւաքեն զբեղուն իրենց մարմնոյն վրայի մազերով, կզակներով, ոտքերով և անոնց վրայ եղած խողանակներով, և կ'ընեն կծիկներ իրենց ետևի ոտքերով: Կզակներով կը հաւաքեն ծաղկան սառէջին վրայ ինչ որ ցրուած կը գտնեն և կամ ինչպէս զսակին վրայ. կը բարձրանան կը թռչին վայրեան մը, և յայնժամ կը ծառքեն կը լմեն և կը միտօրեն բեղնոյ հատիկներ, թըլելով քիչ մը մեղրով՝ զոր կը զտանեն ծաղիկին նեկտարինէն մէջ, և կամ այն մեղրով որ այս բանիս համար կը կրեն իրենց առաջին ստամոքսին մէջ: Բեղնոյ կըծիկը զանգեղէն ու պատրաստելէն, ու առաջին ոտքերէն երկրորդ, և երկրորդէն երրորդ անցնելէն ետքը՝ ուր են տարբարները, նորէն կը սկսին նոյն գործը մինչև որ կծիկը կատարեալը ըլլայ: Երբեմն կզակներով կը քանան սառէջին ընդունարանը ուր է բեղունը. և այն ժամանակ իրենց մարմնոյն վրայի մազերը կը լեցուն բեղնաւորիչ փոշով: Եւ եթէ այս փոշոյն փոքրիկ մաս մը հոսի ինչպէս, կը փութան ժողովել իրենց ակալաներով կամ ոտքերով: Երբեմն ևս կը գլորին այս փոշոյն մէջ, և մարմիննին ամբողջ կը ծածկի այդ փոշով, մինչև նորա գոյնը կ'առնուն. այնպէս որ մեղր մը թուի կ'երևի կակաջի մը բաժակէն դուրս ելած ժամանակ, և զեղին՝ շուշանի կամ դոմոյ բաժակէն ելած ժամանակ:

Մեղուն բեղնաւորիչ փոշով ծածկեալ, կը գործածէ յալողութեամբ իր խողանակները փոշին հաւաքելու և արագութեամբ անցնելու ետանկին թիակներուն մէջ, որք կան վեր-

ջին ոտքերուն կամ թաթերուն վրայ: Այս միջափոր թիակներն մազով չընթացաւեալ են, և կողովի տեղ կը ծառայեն, բեղնոյ հատերը մէջը ընդունելով, և կազմելով անոնցմէ աւանապի կծիկ մը ճմլելով և ծեծելով, զոր կը փոխադրէ յետոյ մեղուն ի փեթակ: Այս կծիկներն կ'ըլլան երբեմն մեծ բայց անկոկ, և երբեմն փոքրիկ:

Այն մեղուն որ կ'երթայ քաղելու զբեղուն, մեղրի քիչ կը պարապի, և կը բերէ միայն բեղուն: Բայց երբեմն կը բերէ երկուքէն ալ միանգամայն. և յայնժամ երկուքին քանակը քիչ կ'ըլլայ քան թէ մի տեսակով բեղնաւորեալ ըլլայ:

Համարումն բեղնոյ. — Երբ մեղուն բեղնով բեղնաւորեալ կը հասնի իր փեթակը, կ'եղնէ խորսիւնն վրայ և կը փնտռէ դատարկ ըջիջ մը ուր կարող ըլլայ գնել իր կծիկները. կը մտնէ նորա մէջ իր երկու տարբալակի ոտքերն, կը չփէ երկուքն իրարու հետ և ըջիկն կողերուն վրայ, և այսպէս մի վայրկենի մէջ կը թօթափէ իր բեղը, և յետոյ կը մեկնի՝ նորէն բերելու համար: Եւ երբ բերէ միասին քիչ մը մեղր, շատ անգամ փոխանակ աշխատելու մեղրը ուրիշ ըջիջ մէջ գնելու, իր բերանը կը մօտեցնէ ուրիշ մեղուն որ կը պարապի ներքին աշխատութեանց, և տայ նմա իր փոքրիկ պաշարը:

Բեղնոյ կծիկներն որ կը դուրսն ըջիջներուն մէջ, կը ճնշուին մեղուաց գլխով և ոտքերով, մինչև որ ըլլան հաստատուն և հոծ մարմին: Բեղնով լցեալ ըջիջներն ոչ երբեք կատարեալ լեցուն կ'ըլլան, և չունին ծածկարան. բայց երբեմն մեղուններն դատարկ մնացած միջոցը մեղրով կը լեցնեն, և կը փակեն յայնժամ ծածկարանով:

Բեղունը կը համարի սովորաբար թըլթուրներուն մօտ, փեթակին միջալայրը կամ ստորին կողմը, և մասնաւորապէս զործառաց ըջիջներուն մէջ: Քիչ անգամ կը տեսնուի փեթակին վերին կողմը, և աւելի քիչ՝ արունց ըջիջներուն մէջ:

Ի՞նչ բանի կը զործասուի բեղունը. — Բեղունը նախնիք կոչէին Պան մեղուաց, վասն զի համարէին թէ մեղուաց կերակուրն է, կոչէին ևս՝ Մոմ անգուստ, չգիտելով մո-

մոյ սկիզբը և կարծելով թէ մեղուք անով
կը շինեն գմոմ: Բայց բեղունն է գլխաւո-
րապէս ի անունդ նորածին մեղուաց որք են
ի կերպարանս թրթրոյ: Ուստի գարնան մեծ
ձուարկութեան ժամանակ մեղուններն կը փու-
թան ըստ կարի աւելի հաւաքել բեղուն: Կան
գաղթականութիւններ որ նոյն ժամա-
նակ օրուան մէջ մի հազարապարմէ աւելի կը
ժողվեն: Եւ ինչպէս ուրիշ տեղ պիտի տես-
նեմք, բեղունը խառնեալ մեղրով և ջրով
յորինի իբրև խիւս, զոր կը պատրաստեն
գործասէր մեղուք և տան թրթրոներուն:
Մեղուններն կը ժողվեն գեղուն ըստ պի-
տոյից առաւել կամ նուազ. և երբեմն առա-
ւել քան ինչ որ պէտք ունին: Բայց թէ որ
մայրը մեռնի կամ զաղրի ձու ածելէն, յայն-
ժամ քիչ կը ժողվեն:

Բաղկացումիւն բեղնոյ. — Բեղունն կը
պարունակէ թթուուտ խնձորական, լուսած-
նատք կրոյ և մազնէսիոյ, տեսակ մը մածոյց
կենդանական, ուստիակերպ կամ սպիտակերպ
նիւթ մը չոր:

Փոխանակումիւն բեղնոյ. — Չմերան
վերջ և ի սկիզբն գարնան, քանի որ զեռ
ժաղիկները բացուած չեն, և կէս օրուան
մօտ օգը աղէկ է, մեղուններն բեղնոյ տեղ
կը ժողվեն ալիւր, մանաւանդ ընդգիշիւսց,
ինչպէս են լուբիս, ոլոռն, ոսպ. և արմ-
տեաց մէջ համար, որով կը սնուցանեն ի-
րենց թրթուրները, չունելով լաւագոյն ինչ:
Եւ երբ ժաղիկներն բացուին, կը սկսին ժող-
վել ծաղկանց բեղունը թողովով վալիւր, զոր
պէտք չէ անփոյթ ըլլալ գնելու իրենց առջև
գարնան սկիզբը: Այս փոխանակութեամբ
կարող կ'ըլլան մեծցնել իրենց թրթուրները,
և երազ բազմացնել իրենց ընտանիքը: Ա-
լիւրը պէտք է գնել փեթակին առջև՝ չոր,
արևու մէջ և հողէ պատասպարեալ: Եւ մե-
ղունները հրաւիրելու համար կը գրուի ամա-
նին մէջ քիչ մը մեղր կամ մեղրախառն
չուր:

Բեղնաւորութիւն բուսոց ի ձեռն մտնուաց.
— Մեղուններն ծաղիկներէն իրենց համար
կարեւոր նիւթերը ծծելու ժամանակ, կը բեղ-
նաւորեն միանգամայն բուսոց սերմերը, և
հետեալ կ'ապահովեն պտղոց բերքը:
Բնութիւնը՝ որ զինչ և իցէ բան պարապ
տեղ ըրած չէ, և գիտէ այնպէս կարգել ա-
մեն քան որ փոփոխակի մին միւսոյն օգտա-
կար ըլլան, ուզեց որ մեղուն պատուելով
բեղնաւորիլ փողոյն պարկունը, դիւրացնէ
այս փողոյն ցրումը և տանի բեղնաւորելու
ոչ միայն այն ծաղկին սերմնափակը որուն
կը վերաբերի, այլ և ուրիշ ծաղկանց, ծա-
ռոց և արմոնաց: Այս պաշտօնը այնչափ կա-
րեւորութիւն ունի. երկրագործութեան մէջ,
որ աւելի մեծ կը համարուի քան թէ մեղրի
և միմոյ օգտակարութիւնը:

Մեղուն տանելով բեղունը բոյսէ մը ու-
րիշ համասեռ բուսոյ վրայ, կը ստեղծէ շատ
անգամ նորանոր զանազանութիւններ:

Հեղինակ մը գիտած է որ մեղու մը ժա-
մուան մը մէջ 250 ծաղկանց այցելութիւն
կ'ընէ, որով մի ծաղկէ առած բեղունը կը
հաղորդի միւս ծաղկին սերմնափակին հետ,
և կ'ըլլայ բեղնաւորութիւն նոյն ծաղկին:
Համարելով մեղուաց աշխատութիւնը օրուան
մէջ ութ ժամ, և փեթակի մը մեղուաց
թիւը 40000, ասկէ կրնայ գուշակուիլ թէ
օրուան մէջ որչափ այցելութիւն եղած կըր-
նայ ըլլալ ծաղկանց վրայ, համարելով ևս
թէ այս այցելութեանց մեծագոյն մասը ան-
բեղնաւոր ըլլան, և այցելու մեղուններուն
թիւը փեթակին մեղուաց կիսոյն հաւասար:
Ասոր համար Շատոբրիան կ'ընէր թէ « Մե-
ղուն է առաջնորդ երկրագործի »:

Մեղուարութեան կարեւոր է երկրագոր-
ծութեան նաեւ այս կողմանէ, որ մեղուններն
աւարտութեան ելած ժամանակ կը փնա-
ցեն միջնաւայ շատերուն ձուերը, որք կրնան
փաստկար ըլլալ պտղատու ծառոց:

Հ. Մ. Գլխաւոր

